

# ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՏՊԱՀՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԻԶՈՎ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴԵԼԻՄ

ՄԻ ԷՇ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

1925 թ. Օգոստոսի 1ից 2 զիշերուան մէջ՝  
թափառելով Հայաստանի զիւղական ճանապարհներով, հետեւեցի մի հայ ժողովրդական երգի: Մութն ընկած էր եւ ես կ'ուզէի տուն վերադառնալ: Այդ վայրկետնին մի բարձր աղերսալից նօթա կարեց զիշերային զսվ օքր: Մի ուժգին բարձր տէնօրի ձայն անհուն երկար պահեց այդ նօթան, աղերսեց, եւ երրուսկեց թուլանալ, դողդոջուն ու լայն ալիքնենիրով գէպ ի վախճան բերաւ այդ նօթան:

Մնացի քարացած, այնքան սրտիս զալաւ այդ հնչւնը: Այդ մէկ նօթան աւելի էր քան թախիծ կամ հեշտանք մի թոյլ մարզու, գա մի ամրող ազգի հաւաքական զզացողութեան արտայայտութիւն էր, մարդկութեան մի տանջուած մասի կենդանի աղերսանքը: Այդ մէկ նօթան ինձ համար աւելի արծէք ստացաւ քան վակների ամրող «Տրիստան» օպերան:

Այս մտածողութիւնները, աւելի ճիշտ լինի ասելու՝ զգացալութիւնները, հազիւ մի քանի վայրկեանի աեւողութեամբ վրաս ինկան, երրվերսիշեալ ձայնը նորէն նոյն նօթան արձակեց, բայց պակաս ուժգին: Յողնածութիւնս մի ակնթարթում անհետացաւ, քունա վախխաւ եւ ես ճանապարհից շեղուեցի՝ հետեւելով այդ ձայնին, որ գէպ ի անտառին խորքերը կը հեռանար: Այս երկրորդ նօթան վախճան չառաւ, բայց եղանակ զարձաւ, որին արտայալու ոյժին տպաւորութիւնը իրուքերով չեմ կարող յայտնել. ասել թէ դա յօրինուած է դօրիսկան զամմային վրայ, որ դա ներկայացնուած է ելեւէջների մի շաբք, կարճ և

կար բախումների մի յաջորդութիւն, գա ինձ նոյնչափ անմիտ կ'երեւայ, որչափ ուզենալ բացատրել գոթական տաճարի ազգեցութիւնը՝ նրա երկարութիւնը կամ լայնութիւնը մատնանիշ անելով:

Յանկարձակի, առանց պատճառի, երգիչը լոեց, երեւի հայ երիտասարդ զիւղացի էր, որ իր զիւղը կը դառնար: Ես մնացի, ինչպէս կախարդուած, սիրաս այրուած, մէն մէնակ՝ անտառին մէջ: Մի քանի արտասուք պէտք էր այն չզացունց վիճակից ինձ հանելու համար: Տուն վերապարձայ այն հաստատ համոզմունքով, որ կեանքիս ամենաուժեղ երաժշտական տպաւորութիւնը ունեցայ այդ իրիկուն:

Ասելի յետոյ, թափառելով Ազրբէյձանի մէջ եւ շատ հայկական երգեր լսելով, կարողացայ զրոյն երկու տեսակի բաժանել: Իրրի օրինակ առաջին տեսակի, որ կ'ուզէի անուանել «Ասիական տեսակը», առաջարկում էմ մի ժողովրդական եղանակ, որ զրի առած է երգահան Պ. Անուշաւան Տէր-Ղեռնդեանը: Այդ եղանակին մէջ բոլոր երաժշտական զարգարանքները (mélismes) կարելի է զանել: Պէտք է նկատել, որ երբ ասիական մեղեդին զրի պիտի անցնել, կամ աւելի լաւ է ասել՝ երբ այդ եղանակը կ'ուզենք զօռով պանկեցնել Պրօկրուսի անկողնին մէջ — և բռպական երաժշտական օրէնքին համեմատ — եղանակին մասնաւոր զեղեցկութիւնը կորչում է, այն զեղեցկութիւնը, որ մինչեւ իսկ պարզ tonalité անհնալով, մի տեսակ entre tonalité ունի, որ մասնաւոր երաժշտական տրամադրութիւն է ստեղծում, չափի անսահման նըրը:

բավթիւններ բերում, սրոնց մենք ամենիւն յայտել ասիական եղանակը. մեր երածշտառավոր չենք:

Այս առանձնայատկութիւնները կարող են պարզել, թէ ինչու զանազան երրովական երաժշգնութերը նայն ձեւով չեն կարող արտադրութիւնը չեն կարող թարգմանել, եւ երաժիշտները ստիպուած են երրովական արտայայտութիւն տալ ասիական եղանակին:

A handwritten musical score consisting of four staves. The first staff begins with a treble clef, a key signature of one sharp, and a time signature of 6/4. It features six measures of music with various note heads and stems. The second staff begins with a bass clef and a time signature of 2/4, containing five measures. The third staff begins with a treble clef and a time signature of 2/4, also with five measures. The fourth staff begins with a bass clef and a time signature of 2/4, with four measures. The score concludes with a double bar line and repeat dots at the end of the fourth staff.

Իբր օրինակ երկրորդ տեսակի, որ կ'ուշ-  
գէի անուանել «Երոպական տեսակը», կը  
զետեղեմ այսանդ մի զմայլի ժողովրդական

Handwritten musical score for piano, page 6, measures 1-4. The score consists of four staves of music. Measure 1 starts with a treble clef, two flats, and common time (C). Measure 2 starts with a bass clef, two flats, and common time (C). Measure 3 starts with a treble clef, two flats, and common time (C). Measure 4 starts with a bass clef, two flats, and common time (C). The music features various note values including eighth and sixteenth notes, and rests. Measures 1 and 2 end with a double bar line (||), and measures 3 and 4 end with a single bar line (|).

Այս երգին չափը չտնի այն նեարդային թրթումը (vibration), այն նեարդային անչափ նուրբ անկանոնութիւնը, բայց դարձած է թեմատիք, այսպէս ասած քաղաքակրթութել է; Այն անպահպան որ կայ մեկզիթի շեն-


քին մէջ (modes), ընդունած է այնպիսի երաժշտական լիգու, որ մեզ Եւրոպացիներին մօտիկ է, այնպէս որ կարելի է հաստատել, թէ այդ մէղեղին՝ բազգատմամբ առաջինին՝ չունի ոսցն ներուժութիւնը, բայց եւ այնպէս այն-

չափ արտայացածիչ է, որ նրա հաւասարը զժուար է հանգիպիլ եւրոպական մեղեղիներին մէջ: Այդ երգը կը կոչուի «Սարի Գէլին», սարի հարսը: Երկու սիրահարների զիալօզն է: Կ'ուզեմ բովանդակութիւնը այսուել յայտնել, իրուև նմոյշ հայկական սիրային քնարերգութեան, բայց երաշխաւոր չեմ կատարեալ ճշդութեանը, որովհետեւ հայ վարժապետը շատ քիչ գիտէր ոտսերէն լեզուն, իսկ ևս ամենեւին չեմ հասկանում հայերէնը:

«Հեռու կը փայլէ Փարվանա լեռը.  
Ասա՛, սարի եա՛ր, սարի եա՛ր,  
Ի՞նչ պիտի անեմ:  
Կանչէ՛, կանչէ՛ այստեղ եարիս:  
Երանի՛ իր մայրը մեռած լինէր  
Նրան ծնելուց առաջ»:

«Հեռու կը փայլէ Փարվանա լեռը,  
Ասա՛ ինձի, սարի եա՛ր, սարի եա՛ր,  
Ի՞նչ պիտի անեմ:  
Գնա՛ ճանապարհովդ, ճովի՛ւ, որովհետեւ սիւ  
բած եմ քեզ:  
Երանի՛ մայրդ մեռած լինէր  
Քեզ ծնելուց առաջ»:

Երրորդ ձեւի երգերը պիտի յիշեմ համառոտ կերպով: Այդ եղանակները յօրինուած են շատ բնական երաժշտական տաղաջափութեամբ (période), մէծ մասամբ խմբովին կ'երգուին և փոխանցում (transition) են դէպի հայկական նուագարարանների երաժշտութիւնը:



Ահա բովանդակութիւնը, որ թիֆլիզի մի հայ գերձակունի նշանակեց ինձ համար.

«Կողբի միջով կը վազեն «արաբա»ներ.  
Սրտի թելեր կը կարուին.  
Կամացուկ շարժէր, կառքեր, կամացուկ,  
Որ կարողանամ իր գուլպան կապիւ:  
Կ'ուզէի գեղեցկութեան խալ լինել կուրծքիդ  
վերայ,  
Կ'ուզէի քեզ համբուրել ամբողջ գիշեր,  
Ես քո սիրած եարն Հարօն.  
— Զանիլ աղջիկ, արի՛ մեր այգի,  
Այնտեղ բանանը մեր սրտեր.

Եւ իմ թշնամիս կը դեղնի  
Երբ տեսնէ մեր զերմ համբոյլներ:

Թէեւ ես չունիմ ոչ մի լեզուազիտական յաւակնութիւն, բայց կարծում եմ, որ այս բանաստեղծութիւնը կարող է զաղափար տալ հայրանի մասին այդ լեզուի, որ պատկանում է հնդկա-եւրոպական ընտանիքին:

#### ԱԼԹԻՄ ՄԵԼԻՒԾԱՐ

Թարգմանութիւն գերմաներէնից  
«Musikblätter des Anbruch»Էն

No. 4, 1927, Vienne

ԱՄԲՐԴՈՐԻՑ ԲԱԲԱՅԵԱՆ

## ՅԱԿԵԼՈՒԹՅՈՒՆ

Պ. Ալոիս Մելիշար — երաժիշտ - երգահան (compositeur) է, օրքեսորի դեկանար, նոյնպէս եւ գիտուն երաժիշտ ֆոլքլորիստ (ժողովրդական երգերի մասնագէտ): Այս յօդուածին առթիւ նամակագրութիւն ունեցած լինելով իր հետ, աւելորդ չեմ համարում իր նամակներից, գաղղիկերէն ու գերմաներէն գրուած, մի քանի քաղուածքներ թարգմանել, որտեղ իր համակրութիւնը եւ հիացմունքը նա կ'արտայայտէ հայ երաժշտութեան վերաբերմամբ.

Բերլին, 6 Մարտ 1928

«... Ահա տարիներ կան որ չեմ կարող կոմիտաս վարդապետին երկերը ձեռք բերել: Պետական Ազգային Գրադարանին տեսուչ Պր. Տէր-Յակոբեան էջմիածնում իմ մասնաւոր հետաքրքրութիւնս շարժած էր. փորձած էի թիֆլիզ, Բագու, Մոսկուա գտնել նրա երկերը, բայց անհնարին եղաւ:

Այստեղ՝ Գերմանիայում, մտքովս չէր անցնի պտուելու, որովհետեւ համոզուած էի, որ այդ հրատարակութիւնները Ռուսաստանում են եղել: Իսկոյն ձեր նամակից յետոյ զիմեցիք Brotkopt U. Haertil երաժշտական տունը, բայց նոցա անծանօթ էր Կ. Վ. ի երկը: Թէեւ ուսումնասիրած եմ ահազին քանակութեամբ արեւելեան երաժշտութիւններ Ռուսաստանում (բացի Հայաստանից ճանապարհորդած եմ Ազրբէյջան, Վրաստան, Թուրքեա-

տան), բայց ինձ մասնաւորապէս հետաքրքրում է հայ երաժշտութիւնը, ինչպէս և այդ ազգը որ այնքան մտաւորական է եւ աշխատասեր եւ որ այնքան յառաջադիմում է»:

Բերլին, 27 Յունիս 1928

Այն ամենը, ինչ որ դուք ինձ զբում էք Կոմիտասի՝ այդ զարմանալի անձնաւորութեան մասին՝ ինձ անհուն հետաքրքրութիւն է պատճառում: Ափսոս, որ այդ ահոելի հիւնգութիւնը վախճան բերած է իր այդքան արգիւնաւոր ստեղծագործութեանը: Նրա գաշնաւորութիւնը զմայլելի են, կարելի է ասել օրինակելի:

Բացի Բելա Բարտոկի (հոնգարացի մեծ երաժիշտ) գործից, երբեք այդպիսի նուրը եւ կատարեալ՝ արեւելեան երաժշտութեան վարպետական ներգաշնակման (meisterhaft) չեմ հանգիպած: Մասնաւոր կերպով շնորհակալ կը լինեմ, եթէ իր բոլոր լոյս տեսած երկերը հաճիք զրկել: Եթէ բաւական նիւթ հաւաքուի մօտս, կ'ուզեմ Կ. Վ.ի մասին մի աշխատութիւն պատրաստել: Զափազանց մեծ հետաքրքրութիւն շարժեցիք իմ մէջ այդ մարզուն վերաբերութեամբ եւ անհուն ուրախութիւն պատճառեցիք՝ զրկելով ինձի Կոմիտասեան Խնամատար Յանձնաժողովի հրատակած 1 եւ 2 պրակները»:

Մ. Բ.